
ԲԱՆԿԱԼԹԻԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ

(Ս. ՅԱԿՈԲ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ)

(մամուլի գնահատմամբ)

ԱՐՄԱԻԵՆԻ ՄԻՐՕՂԼՈՒ

(Թուրքիա, ք. Ստամբուլ)

Հայերը 14րդ դարուն բաւական ստուար թիւ մը կը կազմեն Ղալաթիա, ուր կ'ունենան Ս. Սարգիս (կառուցուած 1361-ին եւ անհետ կորսուած)¹ ու Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիները (կառուցուած 1391-ին եւ վերանորոգուած՝ 1436-ին)² եւ իրենց նախնեաց մարմինները կ'ամփոփեն աղօթատեղիներու բոլորտիքը կամ բնակութեանց սահմանին անմիջապէս մօտ բացօդեայ եւ օդասուն տարածութիւններու մէջ: Իսկ 16-րդ դարուն Ղալաթիայէն կը գաղթեն Բերա եւ հետզհետէ կը հաստատուին հոն: Երբ 1560-ի ժանտախտի մեծ համաճարակին առթիւ, Կառավարութիւնը կ'արգիլէ քաղաքի սահմաններուն մէջ ննջեցելոց թաղումը, Ղալաթիոյ Հայերը այնուհետեւ կը պարտաւորուին իրենց մեռելները թաղել՝ Ս. Յակոբ Անկելանոցի դիմաց, ներկայիս («Հարպիյէ» անուանեալ զօրանոցի³ քով) գտնուող ընդարձակ գերեզմանատան՝ Բանկալթիի Հայոց գերեզմանատան մէջ: Բանկալթիի Ազգային գերեզմանատունը⁴, որ սկզբնաւորութիւն ունեցած է 1560-էն աւելի առաջ⁵, կ'որմնափակուի 1853-ին եւ դրան վրայ արձանագրութիւն մը կը գետեղուի 1856-ին⁶:

Յաջորդող դարերուն, Կ. Պոլսոյ բնակչութիւնը հետզհետէ կը բազմանայ, Բերայի թաղը հետզհետէ կ'ընդարձակուի. նախ Բանկալթիի եւ աւելի վերջ Շիշլիի նորագոյն թաղերը կը կազմուին:

1865-ին, երբ կրկին համաճարակ հիւանդութիւն մը՝ հնտախտը, կը սարսափեցնէ Պոլսոյ բնակիչները, Կառավարութիւնը՝ վտանգաւոր նկատելով բնակարաններու մօտ ննջեցեալներու թաղումը, համաճարակ հիւանդութեան առաջն առնելու համար կ'արգիլէ այս կողմերն ալ այլեւս

¹ Սիբունի Յ., Պոլիս եւ իր դերը, Ա. Հաստը, Պէյրութ, 1965, էջ 199:

² Նոյն տեղէն, էջ 235:

³ «Զօրանոցը, որ կառուցուած է 1862 թուականին Արքունի ճարտարապետ Կարապետ Պալեանի (1800-1866) կողմէ, 10 Փետրուար 1993-էն սկսեալ կը ծառայէ որպէս Զինուորական Թանգարան»:

⁴ «Կ. Սօլայսեան, 7 Յունիս 1939 թուակիր Նոր Լուր-ի յօդուածին մէջ կը տեղեկացնէ, թէ վաղի մէջ իմացած է, թէ Բանկալթիի գերեզմանատան գետինը, Սուլթան Սիւլէյմանի (1520-1566) խոհարարապետ Վաննցի Մանուկ Գարասէֆէրեանի նուիրումով եւ Հայ ազգին ննջեցելոց թաղման յատկացումով՝ մատուցած ծառայութեանց փոխարէն»:
Նոյն տեղեկութիւնը կարելի է կարդալ նաեւ՝ «**Abdullah Muradoğlu, Yeni Şafak** Ծափաք համացանցային Օրաթերթ, 5 Փետրուար, 2007», **Pamukciyan K.**, *Zamanlar, Mekânlar, İnsanlar. İstanbul, 2003, s. 264.*

⁵ **Հանէսեան Մ.**, 125 ամեայ Յոբելեան Բերայի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ, Կ. Պոլիս, 1932, էջ 309-310:

⁶ **Tuğlacı P.**, Իսթանպուլի Հայոց Եկեղեցիները, Բարսեղ Թուղլաճեան, Իսթանպուլ, 1991, էջ 217:

ննջեցեալներու թաղումը⁷: Այս թուականէն վերջ որպէս գերեզմանատուն գործածելու համար Հայ հասարակութեանց կը տրուի Շիշլիի վերի կողմերը ընդարձակ գետիններ, ուր կը կառուցուի այժմու գերեզմանատունը⁸:

Բանկալթիի Ս. Յակոբ գերեզմանատան մէջ ննջեցեալներու թաղումը կը դադրի 1865 Յուլիս 23-ին եւ յաջորդ օրն արդէն՝ կը սկսի Շիշլիի Ազգային Գերեզմանատան մէջ:

1872-ին կը ձեռնարկուի Բանկալթիի Ազգային Գերեզմանատունը գրաւել՝ մօտակայ զօրանոցի պէտքերուն գործածուելու համար: Նոյն տարւոյն Դեկտեմբեր 22-ին Հայ հոգեւորականներ՝ գլխաւորութեամբ Թրակիոյ թեմի առաջնորդ Տ. Թադէոս Եպիսկոպոսի, այս ոտնձգութեան դէմ աղերսագիր մը կը մատուցանեն Ապտիւլ Ազիզ Կայսեր, որ յատուկ հրովարտակով մը կը հաստատէ հայերուն իրաւունքը նոյն գերեզմանատան վրայ⁹:

1874 թուականին, Ներսէս Պատրիարք Վարժապետեան կայսերական արտօնութիւն կը ստանայ՝ վաղամեռիկ Բիւզանդ Գարակէօզեանի փափաքըն իրականացնելու համար իր եղբայրներուն որոշմամբ, Հայ վաճառականական վարժարան մը հիմնելու Բանկալթիի Հայոց Գերեզմանատան մէջ Սակայն, կարելի չըլլար ծրագիրը իրականացնել՝ առեւտրական հրապարակը ցնցող արժեթուղթերու անկումին եւ այլ արգելքներու պատճառաւ¹⁰:

1909-ին Թաղապետութիւնը՝ Բանկալթիի պողոտան լայնցնելու համար, կը պահանջէ թողուլ գերեզմանատան փողոցին երկայնքին վրայ գտնուող մասը: Վէճը, որ կը ծագի Թաղապետութեան եւ Ազգային իշխանութեան միջեւ լուծում կը գտնէ Կառավարութեան միջամտութեամբ՝ թողեալ հողին արժէքին համապատասխան գումարի մը վճարումով: Պոլսոյ Քաղաքապետական ժողովը 11 Փետրուար 1909 թուակիր որոշումով յանձն կ'առնէ 15.000 հնչուն ոսկի տալ՝ իբրեւ հատուցում ըլլալիք ծախքերուն (պատի շինութեան, աճիւններու եւ մահարձաններու փոխադրութեան) եւ ոչ թէ իբր փոխարժէքը այդ հողին, պատճառաբանելով թէ գերեզմանատունը հանրութեան յատկացուած վայր մըն է եւ կարելի չէ թափուով (կալուածաթուղթ) տիրանալ¹¹:

1926-ին Բերայի թաղապետութիւնը կ'արգիլէ Բերա գտնուող գերեզմանատուններուն մէջ ննջեցեալներու թաղումը եւ կորոշէ յարմար տեղ մը փոխադրել Բանկալթիի Հայոց գերեզմանատունը¹²:

1931-ին Պոլսոյ Քաղաքապետութիւնը կը դիմէ Կալուածահամարի (Թափու) վարչութեան՝ պահանջելով Բանկալթիի Հայոց գերեզմանատան իր անունին փոխանցումը: Քաղաքապետութիւնը կ'առարկէ, որ գերեզմանատան գետինը կը պատկանի «Սուլթան Պայազիտ Վելի» անուն վազֆի մը, որով լքեալ գերեզմանատուն է, ուրեմն «1580 թիւ Գերեզմանա-

⁷ Հ. Յ. Մ. Վրդ. Բօսնյան, Գերեզմանատուն Կաթողիկէ Հայոց Կ. Պոլսոյ, Վիեննա, 1931, էջ, 8:

⁸ Նոյն տեղէն, էջ 12:

⁹ Նոյն տեղէն, էջ 318:

¹⁰ Յուշամատենան Գարակէօզեան վարժարանի (1913-1948), Թ. Ագատնյան, Իսթանպուլ, 1949, էջ 16:

¹¹ Ազդարար, 5.V.1931:

¹² Յառաջ, 21.V.1926:

տուններու Օրենք»-ին 167-րդ յօդուածին¹³ համաձայն բոլոր քեալ գերեզմանատուններու նման պէտք է իրեն յանձնուի¹⁴:

Թափույի վարչութիւնը այս պահանջը կը հաղորդէ Էնկիւրիի Թափույի կեդրոնը: Մինչ այդ պաշտօնագրով մը Երրորդութիւն եկեղեցւոյ թաղային խորհուրդէն կը պահանջէ ներկայացնել՝ գերեզմանատան «Թափու Սէնէտի»-ն (կալուածաթուղթը)¹⁵: Հայոց Ազգային Քաղաքական ժողովը կը դասաւորէ հարկ եղած օրինական թուղթերը եւ թափույի վարչութեան դիմում կատարելու համար Էնկիւրի կը դրկէ երկու պատուիրակներ (Գ. Թորգոմեան եւ Մ. Նարլեան): Պատուիրակները Կալուածահամարի կեդրոնական վարչութեան դիմելով՝ վաւերագրերով կը բացատրեն թէ Բանկայթիի Հայոց գերեզմանատունը ենթակայ չէ Թուրք Ազգային ժողովէն վաւերացեալ «Գերեզմանատանց Օրենք»-ին նախատեսած գրաման, քանի որ ո՛չ անտէր է ո՛չ ալ քեալ եւ ժամանակին պահանջած առողջապահական պատճառներով է, որ արգիլուած է հոն ննջեցելոց թաղումը եւ այդ ատենէն վերջ բազմաթիւ անգամներ հաստատուած է, թէ Հայոց սեփականութիւն է¹⁶:

Հակառակ այս վիճակին, Թափույի կեդրոնէն հրահանգ կը տրուի Պոլսոյ թափույի վարչութեան ընթացք տալ Քաղաքապետութեան պահանջին եւ գերեզմանատունը անոր անունով արձանագրել:

Քաղաքապետութիւնը կը գրաւէ Բանկայթիի գերեզմանատունը եւ արգելք (հաճգ) կը դնէ գերեզմանատան խանութներուն եւ կառածներուն հասոյթին վրայ: Հայոց Պատրիարքարանը դատ կը բանայ Քաղաքապետութեան դէմ, իբրեւ դատախազ կը դիմեն Նարոյեան Պատրիարք եւ Վարչութեան ատենապետ՝ Գ. Թորգոմեան, պնդելով թէ գետինը քեալ գերեզմանատուն չէ եւ ունի սեփականատիրութեան իրաւունք: Քաղաքապետութեան փաստաբանը կը պահանջէ Պոլսոյ Քաղաքային Դ. Ատեանէն՝ դատը յանձնել Պետական Խորհուրդին, առարկելով որ ատեանը իրաւասու չէ սոյն դատով զբաղելու: Այս առթիւ Պատրիարքարանի փաստաբանները դատարանին կը յանձնեն յիշատակագրեր, որոնք փաստացի կը հերքեն հակառակորդ կողմին առարկութիւնները¹⁷: Այս յիշատակագրերու հիման վրայ Պոլսոյ Քաղաքային Դ. Ատեանը, միաձայնութեամբ կորոշէ, թէ ինք իրաւասու է այս դատով զբաղելու¹⁸:

Այսպէս Պոլսոյ Քաղաքային Դ. Ատեանին առջեւ կը շարունակուի դատը, ուր Պատրիարքարանի փաստաբաններ՝ Պ. Նարլեան եւ Նէճաթի պէ կը պահանջեն թէպիքի իիթիյաթի (կանխարգելիչ միջոց) ձեռք առնել, այսինքն չթողուլ որ գերեզմանատունը Քաղաքապետութեան անցնի պաշտօնապէս, մինչեւ դատի վերջանալը: Դատարանը կ'ընդունի այս պահանջը, որուն փոխարէն սակայն պայման կը դնէ 20.000 թրքական

¹³ «1580 թիւ Գերեզմանատուններու Օրենքին 167 յօդուածը կ'ըսէ.- Լքեալ, անտէր եւ վագրք եղած հանրային գերեզմանատունները, ընդհանուր իրաւունքներով եւ պարտականութիւններով փոխանցուած են թաղապետութիւններու»:

¹⁴ Արեւելք, 1.XII.1931:

¹⁵ Հայաստանի Կոչնակ, 17.I.1931:

¹⁶ Նոյն տեղէն, 24.I.1931:

¹⁷ Ազդարար, 20.III.1931:

¹⁸ Նոյն տեղէն, 22.III.1931:

ոսկի երաշխաւորութեան ներկայացում¹⁹ որպէս զի երբ քաղաքապետութիւնը ռեւէ վնաս կրէ դատի բերումով հողին ուշ տիրանալուն եւ հետեւաբար զինի անկումին հետեւանքով, հատուցում կատարուի յիշեալ երաշխաւորութեան գումարէն:

Այս քաղաքապետութեան փաստաբանները կը պնդեն, թէ Հայ համայնք գոյութիւն չունի Թուրքիոյ մէջ, գոյութիւն չունի նաեւ Հայոց Պատրիարքութիւն: Կատարկեն, թէ «Նախարարական խորհուրդին 19 Յուլիս 1915 թուակիր եւ 729 համար կանոնագրով Պատրիարքը Երուսաղէմ աքսորուեցաւ, Պատրիարքութիւնն ալ հոն փոխադրուեցաւ, այսօր Պոլսոյ մէջ այդ տեսակ հաստատութիւն մը չկայ. Ուրեմն՝ Նարոյեան Պատրիարք իրաւունք չունի դատ բանալու»²⁰: Պատրիարքարանի փաստաբանները շատ փաստացի յուշագրեր կը ներկայացնեն դատարանին՝ ի նպաստ հայ համայնքին գոյութեան, որոնցմէ 18 Հոկտեմբեր 1915 թուակիր եւ 1334 համար կանոնագիրը, որն կը վերահաստատէ պատրիարքութիւնը ինչպէս նաեւ Պատրիարքարանի կանոնագիրը, պատասխանը կըլլայ Քաղաքապետութեան փաստաբաններուն առարկութեան²¹: Դատարանը կը մերժէ հակառակորդ կողմին պնդումը եւ կընդունի պատրիարքարանի դատ բանալու իրաւունքը:

Այսպէս՝ Քաղաքային Դ. ատեանին որոշմամբ, իրաւապէս կը հաստատուին երկու կարեւոր սկզբունքներ.

ա) Հայ համայնք գոյութիւն ունի Թուրքիոյ մէջ իբրեւ իրաւաբանական անձ օժտուած՝ անոր յատուկ օրինական բոլոր իրաւունքներով (կալուածի գնում, վաճառում, մատակարարութիւն, հակակշիռ եւլն):

բ) Այս համայնքին իրաւասու պէտն է Նարոյեան Պատրիարք, որ իբրեւ դատախազ ներկայացած է գերեզմանատան դատին առջեւ²²:

Այս սկզբունքներով Քաղաքային Դ. Ատեանը որոշած կըլլայ թէ Պատրիարքը միւրեւելիին է համայնքային բոլոր կալուածներուն:

Բանկալիթի գերեզմանատան հողամասը, որ 56.000 քառակուսի մետր գետինէ ու 5.000 քառակուսի մետր կալուածներու մասէ կը բաղկանայ²³, գտնուելով Բերայի ամենամեծ, ամենաընդարձակ ու բանուկ պողոտային վրայ, մեծ արժէք կը ներկայացնէ եւ այդ պատճառաւ բոլորին նպատակը կըլլայ այս կամ այն ձեւով խլել հայ համայնքին ձեռքէն այս գերեզմանատունը, որուն այդ օրուան արժէքը՝ ըստ թուրք թերթերու գնահատանքին կը հասնի միլիոններու²⁴: Նոյն օրերուն Պոլսոյ քաղաքապետութենէն գատ, Այազ Փաշայի միւրեւելիութիւնն ալ կը պահանջէ այդ հողամասը, առարկելով որ կը պատկանի Այազ Փաշայի վագֆին²⁵:

Մինչ դատը կը շարունակուի եւ Քաղաքապետութիւնը կը պնդէ, որ գերեզմանատունը կը պատկանի Սուլթան Պայագիտի վագֆին, Պատրիարքարանի եւ Քաղաքապետութեան միջեւ տեղի ունեցող վեճը լուծելու համար անհրաժեշտութիւն կը ստեղծուի հին դիւաններ քրքրել եւ վաւե-

¹⁹ Նոյն տեղէն, 26.II.1931:

²⁰ Նոյն տեղէն, 23.III.1931:

²¹ Նոյն տեղէն, 17.IV.1931, էջ 760:

²² Նոյն տեղէն, 26.IV.1931:

²³ Նոր Լուր, 14.II.1935:

²⁴ Հայրենիք Ամսագիր, Յունուար 1932:

²⁵ Արաքս, 17.X.1931:

րագրեր հանել՝ սեփականության իրաւունքը հաստատելու համար: Դատարանը յարմար կը տեսնէ այդ վագֆին հուտուտնամէն (սահմանաթուղթը) պահանջել: Կորոշէ նաեւ այս գործը յանձնել փորձագէտներու եզրակացութեան ու կը կազմէ մասնագիտական քննիչ մարմին մը, որուն անդամներն կ'ըլլան Թաղապետութեան գերեզմանատուներու տնօրէնը, Քատասթրոյի գիտական գործոց տնօրէնը, պատմագէտներ, թանգարանի տնօրէնը եւ թափույի պաշտօնատար մը²⁶: Այս քննիչ մարմինը տեղւոյն վրայ քննութիւններ կատարելով, յետ քննութեան իր տեղեկագիրը կը ներկայացնէ դատարանին, որ սակայն աննպաստ կ'ըլլայ Պատրիարքարանին համար: Քննիչները կը գտնեն, թէ գերեզմանատունը կը նկատուի Սուլթան Պայագիտի վագֆի սահմաններուն մէջ: Հիմնուելով թուրք փորձագէտ եւ պատմաբաններու այս եզրակացութեան վրայ Պոլսոյ իրաւական ատեանը կորոշէ, որ Բանկալթիի Հայոց գերեզմանատունը «Գերեզմանատանց օրէնք»-ին համաձայն պէտք է Քաղաքապետութեան փոխանցուի իբրեւ լքեալ²⁷:

Պատրիարքարանի փաստաբանները կը դիմեն Վճռաբեկին, խնդրելով որ բեկէ այս որոշումը: Վճռաբեկ ատեանը, առանց գործին էութեան թափանցելու, այսինքն առանց քննելու, թէ գերեզմանատունը որու կը պատկանի 1933 Մարտ 4-ին կը հաղորդէ իր վճիռը, «քանի որ այդ գետինը եկեղեցապատկան կալուած (աքար) չէ, Պատրիարքը իրաւունք չունի իբրեւ դատախազ ներկայանալու: «Բարոյական անձնաւորութեանց օրէնք»-ին համաձայն՝ համայնքներու պետերը ռեւէ իրաւասութիւն չունին իրենց կրօնական եւ բարեգործական հաստատութեանց պատկանող բայց կալուած (աքար) չեղող հողերու վրայ»²⁸:

Վճռաբեկի այս որոշման փոխարէն Պատրիարքարանը դարձեալ կը դիմէ Վճռաբեկ ատեանին պահանջելով վճռի սրբագրութիւն (թասիհիլը գարար), բայց Ատեանը կը պնդէ իր նախկին տեսակէտին վրայ²⁹:

Դատական նախկին պաշտօնատունը (ապա կը կոչուի Արդարութեան պալատ) 3 Դեկտեմբեր 1933 կ'իրակի գիշերուան հրդեհին բոցերու ճարակ կ'ըլլայ ուր կը փճանան բոլոր թղթածրարները եւ դիւանաթուղթերը³⁰: Թէեւ Բանկալթիի Ս. Յակոբ գերեզմանատան դատին վերաբերեալ թուղթերն ու վաւերագրերը գոյութիւն կ'ունենան Թափույին ու Քաղաքապետութեան մէջ, բայց դատը կը հետաձգուի մինչեւ դատարաններու գործունէութեան վերալծուիլը:

Բանկալթիի գերեզմանատան դատավարութիւնը, որ կը սկսի 1 Մարտ 1931 թուականին, վերջ կը գտնէ 26 Նոյեմբեր 1934ին: Դատարանը կը դատապարտէ Պատրիարքարանը վճարել դատական ծախքերը եւ Քաղաքապետութեան փոխանորդին 150 ոսկի իբրեւ փաստաբանական ծախք³¹: Ինչպէս նաեւ կը ջնջէ կանխարգել միջոցը:

²⁶ Արեւիկ, 16.II.1932:

²⁷ Ազդարար, 6.III.1933:

²⁸ Նոյն տնդէն, 23.X.1934:

²⁹ Յառաջ, 13.IX.1933:

³⁰ Նոյն տնդէն, 5.XII.1933:

³¹ Ազդարար, 27.XI.1934:

Դատարանի այս որոշումն վերջ, նկատելով որ վճիռը առնչություն չունի դատին էության հետ, այսինքն գերեզմանատան սեփականություն թէ լքեալ գոյք ըլլալու խնդրին հետ, Գերեզմանատան համար դատախազ կը կանգնի Բերայի Թաղային Խորհուրդը: Ատենապետ Փրօֆ. Ճէլալ դիմում կը կատարէ Իրաւական Ա. Ատենանին եւ կը պահանջէ կանխարգել միջոց: Այսպէս կը սկսի դատավարութեան երկրորդ շրջան մը: Դատարանը կը հաստատէ ջնջել հողին կանխարգել միջոցը, պահելով միայն իր վրայ շէնք գտնուող հողամասին համար, պայմանաւ որ 10.000 ոսկիի երաշխաւորություն ցոյց տրուի³²:

Մինչ գերեզմանատան այն մասերը, որոնց վրայ շէնք կան, ազգին կը մնան մինչեւ դատին վերջաւորութիւնը, Քաղաքապետութիւնը առանց դատին վախճանն սպասելու սեփականաթուղթերն հանել կուտայ հողային մասին եւ կը պատրաստէ գերեզմանատան բաժանման քարտէսները, կը ճշդէ իւրաքանչիւր մէթրին արժէքը. յառաջամասին համար՝ 90, ետեւի մասին համար 70 ոսկի: Կը ծրագրէ բաժանման գործողութեան աւարտին մաս առ մաս ծախել զայն³³:

Մինչ այդ գերեզմանատան հողամասին համար ալ գնահատումի քննութեան պահանջով կը դիմէ Դատարան, որն ստուգիչ մարմին մը կը կազմէ եւ 27 Յունուար 1935-ին գնահատման քննութիւն կը կատարուի՝ ստուգելու համար ներկայ եւ երեք տարի առաջուան արժէքին տարբերութիւնը: Քաղաքապետութիւնը հատուցում կուզէ, դիտել տալով որ գերեզմանատան հողին գինը ինկած է երեք տարուայ ընթացքին: Կը պահանջէ նաեւ համեմատական վարձք (երեք տարուայ ընթացքին գանձուած հողի վարձքերը)³⁴:

Քաղաքապետութիւնը կը դիմէ նաեւ Բերայի Թափույի վարչութեան, որպէս զի իր անունին սեփականութեան թուղթ տրուի Բանկալթիի գերեզմանատան թափուր հողամասին համար: Յաջորդող օրերուն Բերայի թաղային Խորհուրդը խնդրագիր մը կուտայ Բերայի Թափույի վարչութեան, որպէս զի նման թուղթ մը չտրուի Քաղաքապետութեան, քանի որ դատի ձեռնարկուած է գերեզմանատան խնդրի մասին եւ դեռ դատական վճիռ կայացած չէ³⁵:

Մինչ այդ, Գերեզմանատանց Տնօրէնութիւնը Քաղաքապետութեան միջոցով Բերայի կալուածոց հոգաբարձութենէն ստիպողաբար կը պահանջէ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ եւ գերեզմանատան միւս շէնքերուն (կառատուններուն եւ խանութներուն) կառուցման արտօնագիրը՝ ճշդելու համար գերեզմանատան շէնքի ու հողի մասերը³⁶:

Հոգաբարձութիւնը, Ս. Լուսաւորիչ Եկեղեցիէն զատ, բոլորին շինութեան արտօնագրերուն նօտարէ վաւերացեալ օրինակները կը ներկայացնէ: Ս. Լուսաւորիչ Եկեղեցին (Ս. Գրիգոր Լուսաւորիչի նուիրուած Խոր Վիրապ Եկեղեցին), որ գերեզմանատան հարաւային

ծայրը

կը

հաստա-

³² Արմենիք, 6.XII.1934:

³³ Յառաջ, 4.I.1935 (արտատպուած՝ 30XII.1934 թուականի «Zaman» թրքական թերթէն):

³⁴ Արմենիք, 28.I.1935:

³⁵ Նույն տողէն, 7.II.1935:

³⁶ Նոր Լուր, 26.II.1935:

տուի 1865 Յուլիս 28-ին, որպես զի այնուհետև բերուած ննջեցեալները, եկեղեցական արարողութիւն կատարուելէ վերջ փոխադրուին Շիշլի եւ ամփոփուին նորահաստատ գերեզմանատան մէջ³⁷ Եկեղեցւոյ հրովարտակը, որ տրուած է 1865-ին Սուլթան Ազիզի կողմէ, ի պահ կը դրուի Բերայի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ խորհրդարանը, ուր կ'այրի 1871 թուականի Բերայի հրդեհի ընթացքին³⁸:

Թափույի կեդրոնական Յանձնաժողովը կ'որոշէ գերեզմանատան գետնին թափուն (սեփականագիր) տալ Քաղաքապետութեան³⁹, ուր կ'ըսուի թէ գերեզմանատան հողը 51.968 քառակուսի մէթր, քաղաքապետութեան սեփականութիւնն է⁴⁰: Քաղաքապետութիւնը կը պատրաստէ նոր քարտէս մը, որուն համաձայն կը կատարուի սահմանագծում, որով Ս. Լուսաւորիչ եկեղեցիին անմիջական մաս կազմող սեփական ճամբան, պարտէզը եւ հանրակառքի ճամբուն վրայի դուռը գերեզմանատան մէջ կ'առնուին, թողլով միայն եկեղեցիին կաշած խիստ նեղ անցք մը⁴¹: Գամել կուտայ նաեւ «Հոգեւոր Տիրոջ Դամբարանը» առաջնորդող ցանկապատը⁴²:

Իսկ Դատարանի Ստուգիչ մարմինը (փորձագէտներու մարմին) կատարուած մանրակրկիտ քննութեան արդիւնքը կը ներկայացնէ տեղեկագիրով՝ որուն համաձայն յայտնի կը դառնայ, որ Բանկայթիի գերեզմանատան գետնի արժէքը երեք տարուայ ընթացքին 10 ոսկի (քառակուսի մէթրէն իջած է 7.5 ոսկի) քառակուսի մէթրի: Արժէքին տարբերութիւնը կը գնահատուի 124.000 ոսկի⁴³:

Յաջորդող օրերուն կը ջնջուի գերեզմանատան դրան ճակատի «Գերեզմանատուն Հայոց» վերտառութիւնը եւ կը վերցուի Խաչը⁴⁴:

Քաղաքապետութիւնը դատ կը բանայ Ս. Պատրիարք Հօր եւ Բանկայթիի գերեզմանատան երաշխաւորներուն դէմ, պահանջելով 180.000 ոսկիի վնասուց հատուցում՝ գերեզմանատան սեփականութեան համար բացուած դատով տեղոյն վաճառումին յապաղման պատճառաւ կրած վնասին փոխարէն⁴⁵:

Յաջորդող ամիսներուն Բանկայթիի գերեզմանատան մասին խնդիր կը ծագի նաեւ Էվգաֆի (վագֆներու Տնօրէնութեան) եւ Քաղաքապետութեան միջեւ, զի երկու կողմերն ալ կը պնդեն, որ գետինը իրենց կը պատկանի⁴⁶:

Քաղաքապետութեան եւ Համայնքին միջեւ երկար տարիներ շարունակուող խնդիրը Ներքին Գործավարութեան հրամանով կը կարգադրուի վարչական եղանակով եւ իրաւախոհութեամբ: Կուսակալ Մուհիտտին եւ

³⁷ Մարտիրոս Հանեսման, 125 ամնայ Յոբելման Բերայի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ, Կ. Պոլիս, 1932, էջ 292:

³⁸ Նոյն տեղէն:

³⁹ Նոր Լուր, 29.III.1935:

⁴⁰ Յառաջ, 19.IV.1935:

⁴¹ Նոր Լուր, 17.IV.1935:

⁴² Նոյն տեղէն, 1.V.1935:

⁴³ Նոյն տեղէն, 14.V.1935:

⁴⁴ Նոյն տեղէն, 23.V.1935:

⁴⁵ Նոյն տեղէն, 2.VI.1935:

⁴⁶ Նոյն տեղէն, 6.X.1935:

Բերայի Թաղային խորհուրդին լիազորը՝ Տրթ. Ա. Սուրենեան կը ստորագրեն համաձայնագիր մը, որով վերջ կը գտնեն գերեզմանատան սեփականութեան եւ վնաս հատուցման դատերը՝ շէնքերը կը թողուին համայնքին (մօտ 6.000 քառակուսի մէթր) եւ մնացեալ հողամասն ալ (50.000 քառակուսի մէթր) կանցնի Քաղաքապետութեան իսկ կալուածներուն եւ Եկեղեցւոյ մէջտեղը գտնուող 1287.5 քառակուսի մէթր կանգուն գետինը կը բաժնուի կարգ մը անձերու միջեւ: Համայնքէն 3200 ոսկի կը պահանջուի, իբր դատական ծախք՝ հաշտարար եղանակով վերջ գտած դատի⁴⁷:

Պոլսոյ Քաղաքապետութիւնը 1938 թ. սկիզբը կ'որոշէ Բանկալթիի Ս. Յակոբ գերեզմանատունը թափուր հողամասի վերածել եւ յետագային այնտեղ շինել բնակարաններ, ինչպէս նաեւ բառք (հանրային պարտէզ) մը: Կը զեկուցէ շահագրգռողներուն վերցնել գերեզմանները, տալով 15 օր ժամանակամիջոց⁴⁸: Նարոյեան Պատրիարք, Պէյօղլուի Թաղական Խորհուրդին կը գրէ, որպէս զի ազգային սրբազան աւանդութեանց ջերմ պաշտպան հանդիսացած եւ ազգանուէր գործունէութեամբ Հայ դպրութեան սատարած՝ հոգեւոյս Յակոբ Կաթողիկոս Ջուղայեցիի (վախճանած 1680 Օգոստոս 2ին) դամբարանը (Հոգեւոր Տէր)⁴⁹, Բանկալթիի գերեզմանատունէն Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ շրջափակը փոխադրելու համար հարկ եղած դիմումը կատարեն պատկանեալ իշխանութեան մօտ⁵⁰: Հոգեւոր Տիրոջ դամբարանը, որ այդ օրերուն փոխադրուած է, այժմ եւս կը պահպանուի Պէյօղլու Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ շրջափակը:

Բանկալթիի Ս. Յակոբ Հայոց գերեզմանատունը, որ իր կեդրոնական, բարձրադիր, հովասուն եւ ծովահայեաց դիրքով միշտ ախորժակներ կը գրգռէ եւ հակառակ պաշտօնական վաւերագրերու ներկայութեան (սեփականութեանց թուղթեր, շինութեան արտօնագիրներ, վագֆ գոյութիւն չունենալու արձանագրութիւններ, միւլք ըլլալուն վերաբերեալ գրութիւններ), որոնք տարակոյս չեն թողուր անոր սեփականութեան մասին, 8 տարուան երկար պայքարալից դատավարութեան շրջանէ մը վերջ, 1939-ին ամբողջական ապաստեփականացման կենթարկուի, կը փլցուի Ս. Գրիգոր Լուսաւորիչի նուիրուած Խոր Վիրապ Եկեղեցին: Քաղաքապետութիւնը Հանրային Պարտէզի աստիճաններու շինութեան, ինչպէս նաեւ մեծաւ մասամբ Էմինէօնի հրապարակին նորոգութեան⁵¹ կը գործածէ գերեզմանատան անտէր շիրմաքարերը, որոնք այսօր եւս անձայն ականատեսները կը հանդիսանան՝ «Լքեալ Գոյք» երու ճակատագիրը բաժնած եւ մոռացութեան ենթարկուած երբեմնի գերեզմաննոցին:

⁴⁷ Ժամանակ, 7.XII.1937:

⁴⁸ Արեւելք, 9.II.1938:

⁴⁹ «Հոգեւոր Տիրոջ Գերեզմանը՝ ուր ամփոփուած է Յակոբ Դ. Կաթողիկոսի մարմինը եւ անոր վրայ դրուած՝ երկաթ վանդակներով շրջապատուած մարմարեան շիրիմ մը, մեծ ուխտատեղի կը դառնայ ինչպէս Հայերուն, նոյնպէս նաեւ բազմաթիւ Թուրքներուն»:

⁵⁰ Արեւելք, 10.II.1938:

⁵¹ Գեորգ Բամուքճեան, նշվ. աշխ., էջ 266:

НАЦИОНАЛЬНОЕ КЛАДБИЩЕ БАНКАЛТЫ

(КЛАДБИЩЕ СВ. ЯКОВА)

(по оценкам периодической печати)

АРМАВЕНИ МИРОГЛУ

(Турц, я,я.яСтамбул)я

Резюме

я

Армянское национальное кладбище Банкалты (г. Константинополь) было основано еще до 1560. Кладбище существовало до июля 1865 г., впоследствии же оно было закрыто, ибо находилось по соседству с жилыми домами. В 1929 г. турецкими властями было принято решение о предоставлении под кладбище другой территории. Имевшая место в 1930-ые годы тяжба между армянским патриаршеством Константинополя и городской мэрией по вопросу о том, чьей собственностью являлось данное кладбище, длилась несколько лет и завершилось в 1938 г. Жилые дома, расположенные по соседству с кладбищем и занимавшие территорию 6000 кв. м, были предоставлены армянской колонии, остальные земельные участки – 50.000 кв. м – городской мэрии, а 1287,5 кв. м земли были отданы частным лицам.

В 1939 г. кладбище было национализировано турецким правительством, а находившаяся на ее территории церковь Хор Вирап была разрушена.я

я